Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-418-26.12.2008-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած անձին, ինչպես նաև այն անձին, որի գործողության կամ անգործության կապակցությամբ տրված է եղել հանցագործության մասին հաղորդումը:

Այն անձը, որի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, իրավունք ունի որոշումն ընդունվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում պահանջել դրա պատճեն: Այս դեպքում որոշման պատճեն դիմողին է ուղարկվում անհապաղ:

Որոշման պատճենը ստանալու պահից 7-օրյա ժամկետում, անձն իրավունք ունի սույն օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված կարգով ծանոթանալու հանցագործության հաղորդման քննարկման արդյունքում ձեռք բերված բոլոր նյութերին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային Ժողովում 2010թ. փետրվարի 22-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի երկրորդ ընթերցման համար ներկայացված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1	ՀՀ Կառավարություն ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամներ	Հոդված 1-ին	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ	Առաջարկությունն ընդունվել է:

			հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած անձին, ինչպես նաև այն անձին, որի գործողության կամ անգործության կապակցությամբ տրված է եղել հանցագործության մասին հաղորդումը: Այն անձը, որի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, իրավունք ունի որոշումն ընդունվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում պահանջել դրա պատճեն: Այս դեպքում որոշման պատճեն դիմողին է ուղարկվում անհապաղ: Որոշման պատճենը տանալու պահից 7-օրյա ժամկետում, անձն իրավունք ունի սույն օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված կարգով ծանոթանալու հանցագործության հաղորդման քննարկման արդյունքում ձեռք բերված բոլոր նյութերին:»:	